

ՆՈՐ-ՆԱԽԻԶԵՒԱՆԻ ԲԱՆԱՀԻՒՈՈՒԹԻՒՆԻՑ

Խ. Փորձեանի

Ա.

Ա Ի Ե Տ Ի Ս Ի Ն Ե Ր

1.

Այստեղի գիւղերում կայ մի գեղեցիկ սովորութիւն, որ առաջ քաղաքներում էլ է եղել. ճրագալոյցի երեկոյեան իւրաքանչիւր թաղի երիտասարդները բաժաննուում են խմբերի, շրջում ամենքի տները, աւետում Քրիստոսի ծնունդը ու երգում այս շաւետիս» կոչուած երգերը, փոխարէնն ստանում են հիւրասիրութիւն, մի մեծ «խալաճ», երկու գաթայ և մի քանի կոպէկ էլ փող. արդիւնքը գնում է աւետիսի տան զանձանակը, միսւում է զանազանակերպ, մեծ մասամբ «խօնաշմայի», այսինքն բէֆի, որին մասնակցում են թաղի բոլոր երիտասարդները, բայց վերջին ժամանակներու սկսել են միսւել բարեգործական նպատակով:

Ամեն մի թաղի երիտասարդները ձմեռները վարձում են աւետիսի տուն, առաջներն այստեղ հաւաքուել, ուրախացել և աւետիսներ են սովորել, բայց հիմայ այդ տեղերը դարձել են թղթախաղի կայաններ. այդ տները կառավարում են ընտրուած երկու երիտասարդներով՝ որոնք կոչում են «իգիս աղասիներ». նոցա պարտականութիւնն է պահել կարգ ու կանոն աւետիսի տանը, զապել անկարգ անդամներին, լուծել թաղական երիտասարդների վերաբերեալ բոլոր հարցերը, հարսանիքների ժամանակ հաւաքել իրանց յատկացրուած տուրքերը, Զատկի ժամանակ հաւաքել իրանց ստորագրուած երիտասարդներին ու «սահմախ» ձգել և ուրիշ գործեր կատարել:

Աւետիսների թիւը հինգ է, որոնցից «Աստ մը ելաւ» և «Երանելին» բոլոր գիւղերումն էլ երգւում են, իսկ միւս երկուսից—«Ծնծացէքը» միմիայն թոփտիում, «Յիսուս-Յիսուսը» միմիայն Զալթրում, «Խօսքն Աստուծոյ» միմիայն Մեծ-Սալայում, Սրանցից ամենաառօրեան, ամենահասարակն հաշւում է «Երանելին», որը, ինչպէս վերը յիշեցինք, երգւում է բոլոր գիւղերումն էլ, բայց զանազան գիւղերում ունի իր տարբենը վարիանտը: Մենք վերցնենք Զալթրի ու Թոփտի վարիանտները:

Չալթըռում երգում են.  
 Քեզ երանի, կոյս Մարիամ,  
 Պըտոր ծնանիս Աստուածորդին,  
 Աստուածորդին, Հայր, Սուրբ  
 Հոգին,  
 Մարիամ քերեց իւր մէկ որդին,  
 Բներեց իր հետ աշակերտութին.  
 Մենք գրեցինք Ա, Բ, Գ, Դ.  
 Նա կ'կարդար քերականներ,  
 Մենք գրեցինք քերականներ,  
 Նա կ'կարդար սաղմոսարան.  
 Մենք գրեցինք սաղմոսարան,  
 Նա կ'կարդար աւետարան.  
 Մենք գրեցինք աւետարան,  
 Նա կ'պաշտէր Աստուածաբան,  
 Աստուածաբան ու միաբան,  
 Պահիր ամենքիս միաբան.  
 Արեղաներ իրար եկան,  
 Ցեղոց-ցեղոց կենձէ շարեն.  
 Բարակ երեսոյն թուղթ գրեցին,  
 Կոյս Մարիամին ուղարկեցին.  
 — «Մարիամ, արի առ մէկ որդիդ,  
 Քո մէկ Որդիդ, Հայր, Ս. Հոգիդ.  
 Նա մեզ չարաւ աշկեռտութիւն,  
 Նա մեզ արաւ վարպետութիւն։  
 Մարիամ կորուց իր մէկ Որդին,  
 Թէ իժեք օր, իժեք զիշեր,  
 Թէ իժեք օրէն ետի.  
 Ճամբորդներուն հարցունք ըն-  
 կանք.  
 Մարիամ, տուր մեզ բարի նշան,  
 Որտեղ տեսանք, քեզ հոն ասինք.  
 Երուսաղէմ ծեր մը տեսանք,  
 Խաչ գաւաղան ունէր ափին.  
 Խաչ գաւաղան ունէր ափին,  
 Աւետարանն ալ հետ գիրկն է.  
 Անձրև հագեալ շալէ շապիկ,  
 Դլխին ի վեր արև ծագեալ.  
 Զնդ օգնական, մեզ պահապան  
 պահիր,

Ամեն տարի բարե հասնիք,  
 Զեղ սիրելով ամենքս միաբան,  
 Թոփտիի վարիանտը.  
 Երանելի կոյս, Մարիամ,  
 Որ կոյս էիր, կոյս ծնեցար.  
 Ծնաւ երբէք Աստուածորդին,  
 Աստուածորդին, այն Ս. Հոգին.  
 Մարիամ առաւ իր մէկ Որդին,  
 Տարաւ նրան աշկեռտութեան.  
 Երբ այբուրեն երբ գրեցին,  
 Նա կ'կարդար Սաղմոսարան.  
 Սաղմոսարան երբ գրեցին,  
 Նա կ'կարդար շարակոններ.  
 Շարականներ երբ գրեցին,  
 Նա կ'կարդար Աստուածաբան.  
 Խուց էիր խուց կենկին շարեն(?)։  
 Բարեկան թուղթ գրեցին,  
 Կոյս Մարիամին զիր խրկեցին.  
 — «Մարիամ, արի, առ, քու որ-  
 դին,  
 Քու մէկ Որդիդ, այն Ս. Հոգիդ.  
 Նա չէր անէր աշկեռտութիւն,  
 Մեղի կանէր վարպետութիւն։  
 Մարիամ կորուց իւր մէկ Որ-  
 դին,  
 Իւր մէկ Որդին, այն Ս. Հոգին։  
 Ժուռ գար, կուլար, աղաղակէր,  
 Ճամբորդներուն հարցունք կա-  
 նէր.  
 Մայր, մեզի տուր բանիդ նշան։  
 Որպէս տեսնենք, այնպէս պատ-  
 մենք.  
 Իսկի տեսանք Քու մէկ Որդիդ.  
 Քու մէկ Որդիդ, այն Ս. Հոգիդ.  
 Ես ոչ ոսկով եմ ցանկացեալ,  
 Ոչ իմ Որդուս եմ ցանկացեալ.  
 Շալէ շապիկ ի լոյս անձին,  
 Գլխագարան արևագոյն.  
 Ես ոչ ոսկով եմ ցանկացեալ,

Արդաթի պէս պայծառ կենաս.  
Ենք մը տեսանը յԵրուսաղէմ,

Խաչ, գաւազան ունէր ձեռքին,  
Աւետարան ահէկ գիրկներ

Երկու վարեանտների իմաստն էլ մինոյնն է. տարբերութիւնը խօսքերի աղաւաղման մէջն է. երգողներն իրանք չեն հասկանում խօսքերը, ուստի խիստ հեշտութեամբ են աղաւաղում: Ամօն տողից յետոյ բոլոր աւետիսների մէջ էլ կրկնում է աւետիս՝ խօսքը:

## 2.

«Երանելին», ինչպէս ասեցինք, ամենասովորականն է, երգւում է առասարակ դարիբների տանը, իսկ «Աստղ մը ելաւ» հաշւում է ամենալաւը, երգւում է աղաների տանը. այս մէկը հաշւում է հին աւետիս. ծերերը այնքան են սիրում այս աւետիսը, որ եթէ ճրագալոյցի երեկոյեան շնորհաւորելու եկող տղայքը չիմանան այդ երգին՝ նորա մեղք կը համարեն նրանց ներս ընդունելը, բայց ի՞նչու են սիրում, երեկի իրանք էլ չգիտեն. սիրում են, որովհետև իրանց նախնիքներից էլ սիրուած է եղիլ. կարելի է թերեւս բացատրել նաև նրանով, որ սա որպէս հին աւետիս, շատերը չգիտեն և ծայրէծայր բներանացի իմանալը պարծանք է. իսկ յայտնի է, որ ծերերն սիրում են իրենց անցեալով մրցման մէջ մտնել երիտասարդների հետ: «Աստղն ելաւն» էլ ունի իւր վարիանտները. բայց տարբերութիւնը նորա մէջ շատ չնշին է. օրինակ Զալթքում երգում են.

Աստղն ելաւ ի Հրէաստան,  
իսկ Թոփտիում,—

Աստղ մը ելաւ արևելքէն և այլն:

Դրա համար էլ մենք կը երենք միմիայն Թոփտիի վարիանտը.

Աստղ մը ելաւ արևելքէն,  
Իմաստասէրք զարհուրեցան,  
Աստղաբաշներ ժողովեցան,  
Շատ քննելով զայն չիմացան,  
Իւրեանց մէջ կոյր մը զտան,  
Թէէն մտած, առին, ելան,  
Երբ այն աստղն, որ հայեցաւ,  
Այն կուրացեալ աչքը բացաւ.  
Եղբայր, սա մեծ աստղն—նշան,  
Թագաւոր ծնեալ հրէից արքան,  
Մելքոն, Կասպար և Բաղդասար,

Իժեք թագաւոր, ազնուականք,  
Խորհուրդ արին իւրեանց մէջ,  
Երթանք, տեսնենք հրէից արքան.  
Շատ հեծելով ճամբայ ելան,  
Աստղն ցուցնէր նորա ճամ-  
բան-  
Երեկը հրեշտակ երևեցաւ,  
Գիշերը աստղն լոյսի նման.  
Գնացեն, ելան Հրէաստան.  
Հրէաստան երկիր մտան,  
յԵրուսաղէմ քաղաք մտան.

Դասն այն ճամբոյն յոյժ տըր-  
տմեցան,  
Զոր տեսան, հարցմունք արին,  
Որտեղ ծնեալ հրէից արքան.  
Նորա տային հարց պատասխան.  
Մենք չենք լսէ՝ այդպիսի բան,  
Թէ իժեք օր և իժեք զիշեք  
Աստղն խափան եղե նոցա,  
Թէ իրեք աւուր յետե անց  
Այլով աստղն երեկցաւ.  
Աստղն տեսան ուրախացան,  
Ի մէջ աստղին կոյս մը տեսան,  
Ի մէջ աստղին կոյս մը տեսան,  
Ի մէջ աստղին լոյն ալ տեսան.  
Գնաց այն աստղն կայնեցաւ,  
Տէրուն ներէն լոյսի նման.  
Գնացին եւան ի գուռս այլուին,  
Այլուի այն սուրբ անապատէն.  
Թէ ծեր մտաւ իւր տեսութեան,  
Նա ծեր տեսաւ իւր նմանին.  
Մանուկ մտաւ իւր տեսութեան,

Մանուկ տեսաւ իւր նմանին.  
Ծղան մտաւ իւր տեսութեան,  
Տղան տեսաւ իւր նմանին.  
Ելոն ասին մէկզմէկու,  
Զկայած բաներս բանեաց,  
Թէ իրեն ալ միաբան մտան.  
Յիսուս տղան գիրկն կոյսին նը-  
ման,  
Օրօրեցին մօրը գիրկը.  
Օրօր կուտար Սուրբ զաւակին,  
Օրօր կուտար Սուրբ զաւակին.  
Սուրբ կուտական կայտներ բե-  
րին,  
Ճառագայթի լոյսի նման,  
Կղարհուրէր մօրն տղան.  
Ուկի, կնդրուկ, զմուռ բերին,  
Մտեղծողէն ընծայ տուին,  
Մունը դնելով երկրպագին  
Այն օր եղած թագաւորին.  
Տացցէ աշխարհ խաղաղութիւն,  
Ամեն բարբաց ազատութիւն:

## 3.

«Յիսուս-Յիսուսը» հասարակ աւետիսներից է և, ինչպէս  
վերև յիշեցինք, երգւում է միմիայն Զալթրուում Այս գիւղում պահ-  
պանուել է մի հին սովորութիւն. ճրագալոցցի երեկոյեան նշա-  
նած տղայքը իրանց ընկերների ու ազգականների հեա գնում են  
իրանց նշանուածների տները, տանեցոց թոյլտւութեամբ ներս  
մտնելուց յետոյ, փեսան համբուրում է տանեցոց բոլորի ձեռնե-  
րը և ապա կանգնում տան դռան մօտ, մինչև որ ընտանիքի ա-  
ւագ անդամը չի հրաւիրում նստել ու պատւով հանում վերի  
պատրը: Քիչ յետոյ գուրս է գալիս իւր թագնուած տեղից փեսի  
հարսնացուն ու համբուրում հկւորների ձեռները: Սրանից յետոյ  
տան արական անդամներից մէկը բաժանում է եկւորներին արագ  
և խնդրում, որ երգեն աւետիս. անս այստեղ սովորաբար երգում  
են «Յիսուս-Յիսուս» աւետիսը Երգելուց յետոյ արդէն փեսան  
հանում է իւր ծոցից հարսի ու նրա ազգականների համար բե-  
րած ընծաները և դնում սեղանի վերայ, իրը պատասխան սորան  
հարսի ազգականները իսկոյն բերում են իրենց պատրաստած  
ընծաները փեսի ու նրա ազգականների համար և իրանց ձեռնե-

ըով դնում փեսի ծոցը: Ընծաները լինում են առհասարակ թեռնովիներ, փոշի շալեր, պաճախլըներ և այլն, Երկար նստելուց, լաւ յարգուելուց յետոյ, փեսան իւր ընկերներով սեղանի վերայի ուտելեղէնները լեցնում են թաշկինակների մէջ և վերցնում իրանց հետ: Գնալու ժամանակ երգում են այլես մի աւետիս և բարի գիշեր մաղթելով հեռանում: «Յիսուս-Յիսուսը», իրքն միմայն մի գիւղում երգուղ աւետիս, վարիանտներ չունի:

Յիսուս-Յիսուս աշակերտաց,  
Վաթսուն և վեց հայրապետաց.  
Հետ երթային, հետ քարոզէին,  
Անկալ զլուր կուսաւորչին.  
Գնացին ելան ի ծայր ծովուն,  
Որտեղ կայնած կային նաւեր.  
Եղբայր, առէք, ելէք նաւորդիք,  
Ես ձեզ անհմ բազում աղօթ:  
Մեզ չպիտի բազում աղօթ,  
Մեզ պէտք է բազում դրամ.  
Խաչակնքեց, դրամ կազմեց.  
Յերիս նաւուէր ելան իւր նաւ,  
Հրամանք էին հալման քամուն:  
Մով տականց պղտորուեցաւ.  
Եղբայր, այս ինչ մարդ մեղաւոր,  
Մարդ մեղաւոր, բայց ալեոր,  
Ելան ի վեր, բնկան ի ոտք,  
Դուն մեր Յիսուս, դուն մեր  
Քրիստոս,  
Եղբարք, պահէք, քուն մի եղէք,  
Ես ձեզ անհմ բազում աղօթ.

Թոչունք ելան բաղցրագիշեր,  
Հաւն ալ խօսեց երեք բերան.  
Եղբարք, ելէք անուշ քնիրէդ,  
Հաւսար թելիր հաստատեցան.  
Օրհնած ծովուս, օրհնած նաւ-  
ւորդ,  
Օրհնած նաւորդք պազիրիլեան-  
ներ.  
Ուլն ալ Տիրոջ արբայութիւն,  
Նա ձեր մեղ մեղացն թողութիւն,  
Զեր ձնողաց արքայութիւն.  
Եւ Յիսուս է և Քրիստոս  
Օրհնած այս տունիս տանտէ-  
րեր.  
Եւ Պօղոս է, և Պետրոս է,  
Օրհնած այս տունիս կտրիմներ.  
Աստուած, այս տունիս շէն պա-  
հէ,  
Շէն պահողին ալ ասողջ պահէ.  
Ամէն տարի բարե հասնիք,  
Զեզ սիրելով հաւասար: Ամէն,

## 4.

Չորրորդ տեղն է բռնում «Ճնծացէքը»: Սա էլ շատ սակաւ է երգւում, այն էլ, ինչպէս ասացինք արդէն, միմիայն թոփտիում. վերջինում էլ զիտցողները շատ քիչ են. եթէ պատահի այնպի-սի տեղ, որ միւս աւետիսները երգելուց յիտոյ էլ ուրիշը պա-հանջեն, այն ժամանակ, ինչպէս իրանք են ասում, սա էլ հն «քոքլայում»:

Ճնծացէք և հաւատացէք,  
Այսօր ցնծում է մեր Քրիստոսը.

Ցնծայ երկինք, ցնծայ գետիկ,  
Այսօր Աստուած երկնելին,

Յնծայ այսօր աստղ և լուսին  
Այսօր ծագեաց լոյս մեր երկ-  
նային.  
Յնծայ այսօր ծառ ու ծաղկունք.  
Այսօր բառ վաշտն իր կուսին,  
Յնծայ հրեշտակ, ցնծայ մայրիկ,  
Այսօր բերին տրամեալ հովուին.  
Յնծայ ձուկն ի մէջ ծովուն,  
Այսօր փորձեց զոյցն տէրուն.  
Յնծայ հայրն, ցնծայ մայրն.  
Այսօր կուսաց ի տօնս պաշտին,  
Յնծայ մեր տէր ի խորանին,

Սարկաւագները առաջ բերին.  
Յնծայ այսօր սուրբը մարգարէ,  
Որոնցցց բանն կատարի.  
Աղաղակէր մինն Եսայի,  
Կոյս յեղասցին որդի ծնդին  
Նա մեծ Աստուած որդին.  
Աւետիսն ալ Ս. Գաբրիէլի,  
Մեծ աւետիօք Գաբրիէլին,  
Բան յիշայցին Որդին ծնդիր  
Գայ Բեթղեհէմ Հրէաստանին,  
Ըզ Միքայէլ մարգարէին:

## 5.

Հինգերորդ աւետիսն է «Խօսքն Աստուծոյ», որ երգւում է  
միմիայն Մեծ-Մալյում:

Խօսքն Աստուծոյ առաքեցաւ,  
Բնակիլ յարդանդ ի ս. կոյսին,  
Զոր մարգարէք մտօք տեսին,  
Յառաջագոյն զուշակցին.  
Հրեշտակապետ, զու Գաբրիէլ,  
Երանի տար Մարիամոյն.  
Քեզ երանի կոյս Մարիամ,  
Պիտի ծնանի Աստուածորդին,  
Ս. Յովհաննէս իւր մօրն յար-  
գանդ,  
Երկիրպագեն զԱստուածին.  
Աստղն երև ի արևելք,  
Յառաջնորդին Բաղդասարին.  
Խիստ սքանչելի բաներ եղաւ,  
Վասն ամուսեան ճանապարհին.  
Ելան եկան Երուսաղէմ,  
Որդէս նային զԱստուածորդին.

Յառաջ երթաք ի Բեթղեհէմ,  
Մանուկն ծնաւ ի բարայրին.  
Երեքն միաբան մտին տեսին,  
Տղայ տեսին ի զիրկ կոյսին.  
Նորա տեսին հաւատացին,  
Եւ հաւատով երկիրպագին.  
Թէ Յիսուս է, թէ Քրիստոս է,  
Օրնած տունիս տանուտէրին,  
Թէ Սառա է, թէ Մարթա է,  
Օրնած տունիս տանտիկիննե-  
րուն.  
Թէ Պօղոս է, թէ Պետրոս է,  
Օրնած տանիս կտրիմներին.  
Աստուած, զայս տունը շէն պա-  
հէ,  
Շէն պահողն ալ առողջ պահէ,  
Մինչև գալուստն Փրկչին: